

**Հավատարմագրում
(թեսթավորման հարցաշար)**

N	Հարցեր 2	Պատասխաններ 3
1	Հավատարմագրման բնագավառը կարգավորող օրենքը	<ol style="list-style-type: none"> 1. «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը 2. «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքը 3. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը
2	Ո՞ր տերմինին է համապատասխանում հետևյալ սահմանումը. «Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության հավաստում»	<ol style="list-style-type: none"> 1. Համապատասխանության հավաստում 2. Համապատասխանության պարտադիր հավաստում 3. Համապատասխանության կամավոր հավաստում
3	Շարունակեք միտքը. Հավատարմագրումը	<ol style="list-style-type: none"> 1. . . . լիցենզավորման ձև է 2. . . . սերտիֆիկացման եղանակներից մեկն է 3. . . . համապատասխանության գնահատման ձև է
4	Պատասխաններից ո՞ր զույգն է ընդգրկում հավատարմագրման սկզբունքներ	<ol style="list-style-type: none"> 1. -կամավորությունը -միջազգային ստանդարտներին ներդաշնակ հավատարմագրման պահանջների կիրառումը 2. -զաղտնիությունը -հավատարմագրման գործընթացի թափանցիկությունը 3. -զաղտնիությունը - անկախությունը
5	Ո՞ր ստանդարտների պահանջներով է իրականացվում հավատարմագրումը	<ol style="list-style-type: none"> 1. Ազգային և եվրոպական 2. Միջազգային ԻՍՕ/ՄԷՀ 17000 համակարգի 3. Ազգային
6	Հավատարմագրման խորհուրդը ստեղծում է	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ կառավարությունը 2. Էկոնոմիկայի նախարարությունը 3. Ստանդարտների ազգային ինստիտուտը
7	Հավատարմագրման խորհրդի անհատական կազմը հաստատում է	<ol style="list-style-type: none"> 1. Առևտրի և տնտեսական զարգացման նախարարը 2. ՀՀ կառավարությունը 3. Հավատարմագրման գործակալության պետը
8	Հայտատուն չունի հավատարմագրված փորձարկման լաբորատորիա: Նա կարո՞ղ է հավատարմագրվել որպես սերտիֆիկացման մարմին	<ol style="list-style-type: none"> 1. Այո: Դա նշանակություն չունի 2. Կարող է հավատարմագրվել հավատարմագրման խորհրդի հայեցողությամբ 3. 2006 թ. հունվարի մեկից՝ ոչ
9	«Գեղարդ» ֆիրման արտադրում է մսամթերք: Նա կարո՞ղ է հավատարմագրվել որպես մսամթերք սերտիֆիկացնող մարմին	<ol style="list-style-type: none"> 1. Այո, մեկ տարի ժամանակով 2. Այո 3. Ոչ
10	«Գեղարդ» ֆիրման արտադրում է մսամթերք: Նա կարո՞ղ է հավատարմագրվել որպես մսամթերք սերտիֆիկացնող մարմին	<ol style="list-style-type: none"> 1. Այո, հավատարմագրման գործակալության երաշխավորությամբ 2. Այո 3. Ոչ
11	Հայտատուն չունի ներդրված որակի կառավարման համակարգ: Նա կարո՞ղ է հավատարմագրվել որպես սերտիֆիկացման մարմին	<ol style="list-style-type: none"> 1. Ոչ 2. Այո 3. Որակի կառավարման համակարգ ունենալը հավատարմագրման համար ոչ մի նշանակություն չունի
12	Հայտատուն՝ որպես սերտիֆիկացման մարմին, հավատարմագրվելու համար պարտավոր է	<ol style="list-style-type: none"> 1. Չգբաղվել հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտադրանքի արտադրությամբ, իրացմամբ կամ ծառայությունների մատուցմամբ 2. Չբաղվել «1»-ում նշված գործունեությամբ 3. Չբաղվել «1»-ում նշված գործունեությամբ միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում

13	Չայտատուն չունի ներդրված որակի կառավարման համակարգ: Նա կարող է հավատարմագրվել որպես փորձարկման լաբորատորիա	<ol style="list-style-type: none"> 1. Ոչ 2. Այո 3. Որակի կառավարման համակարգ ունենալը հավատարմագրման համար նշանակություն չունի
14	Չայտատուն՝ որպես փորձարկման լաբորատորիա, հավատարմագրվելու համար պարտավոր է՝	<ol style="list-style-type: none"> 1. Ապահովված լինել առնվազն երկու լեզու ինացող անձնակազմով 2. Ապահովված լինել հավատարմագրման ոլորտում գործունեության համար անհրաժեշտ տարածքով 3. Երևացող տեղում փակցնել իր իրավական կարգավիճակը հաստատող փաստաթուղթ
15	Չայտատուն՝ որպես փորձարկման լաբորատորիա, հավատարմագրվելու համար պարտավոր է՝	<ol style="list-style-type: none"> 1. Ապահովված լինել բարձրագույն կրթությամբ՝ փորձարկում իրականացնող անձնակազմով 2. Ապահովված լինել համապատասխանության հավաստման բնագավառում համապատասխան ուսուցում և փորձագետի որակավորում ստացած անձնակազմով 3. Ապահովված լինել համապատասխանության հավաստման բնագավառում համապատասխան ուսուցում և որակավորում ստացած, փորձարկում իրականացնող անձնակազմով
16	Չայտատուն՝ որպես փորձարկման լաբորատորիա, հավատարմագրվելու համար պարտավոր է՝	<ol style="list-style-type: none"> 1. Սահմանել պատվիրատուներից և այլ կողմերից փորձարկումների հետ առնչվող բողոքների քննարկման կարգ 2. Ունենալ բողոքների գրանցման գիրք 3. Ունենալ բողոքների և առաջարկությունների գրանցման գիրք կամ արկղ
17	Չայտատուն՝ որպես փորձարկման լաբորատորիա, հավատարմագրվելու համար պարտավոր է՝	<ol style="list-style-type: none"> 1. Ապահովել հավատարմագրման ոլորտում ընդգրկված յուրաքանչյուր արտադրանքի կամ ծառայությունների փորձարկումը՝ դրանց բնութագրերի (ցուցանիշների) առնվազն յոթանասունհինգ տոկոս ծավալով 2. «1»-ը, սակայն 2007 թ. հունվարի 1-ից 3. «1»-ը, սակայն 2006 թ. հունվարի 1-ից
18	Չավատարմագրման նպատակով հայտատուն հայտ է ներկայցնում	<ol style="list-style-type: none"> 1. Ազգային մարմին 2. Չավատարմագրման խորհուրդ 3. Ստանդարտների ազգային ինստիտուտ
19	Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ որպես սերտիֆիկացման մարմին հավատարմագրվելու նպատակով հայտին կից ներկայացնելու համար	<ol style="list-style-type: none"> 1. - Իր գործունեության մասին տվյալներ, - հավատարմագրման ոլորտի նախագիծը, - որակի ձեռնարկը, - հարցաթերթը, - հայտատուի՝ որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրման վկայագրի պատճենը - հայտատուի կանոնադրության (եթե նա իրավաբանական անձ է) և պետական գրանցման վկայականի պատճենները 2. - Չավատարմագրման ոլորտի նախագիծը, - օրենքով նախատեսված պետական տուրքի անդորրագիրը, - անձնակազմի յուրաքանչյուր անդամի կրթության փաստաթղթի պատճենները, - որակի ձեռնարկը, - հարցաթերթը 3. - Չավատարմագրման ոլորտի նախագիծը - իր գործունեության մասին տվյալները, - որակի ձեռնարկը, - հարկ վճարողի հաշվի համարը, - հայտատուի կանոնադրության (եթե նա իրավաբանական անձ է) և պետական գրանցման վկայականի պատճենները

20	Որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրվելու նպատակով հայտին կից ներկայացվում են՝	<ol style="list-style-type: none"> 1. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - որակի ձեռնարկը, - հայտատուի կանոնադրության (եթե նա իրավաբանական անձ է) և պետական գրանցման վկայականի պատճենները 2. - Իր գործունեության մասին տվյալները - լաբորատորիայի տեխնիկական անձնագիրը, - հարցաթերթը 3. «1»-ում և «2»-ում թվարկածները միասին
21	Որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրվելու նպատակով հայտին կից ներկայացվող փաստաթղթերից են՝	<ol style="list-style-type: none"> 1. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - իր գործունեության մասին տվյալները - հարցաթերթը 2. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - որակի ձեռնարկը, - օրենքով նախատեսված պետական տուրքի անդորրագիրը 3. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - իր գործունեության մասին տվյալները, - հարկ վճարողի հաշվի համարը
22	Որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրվելու նպատակով հայտին կից ներկայացվող փաստաթղթերից են՝	<ol style="list-style-type: none"> 1. - Որակի ձեռնարկը, - հարցաթերթը, - իր գործունեության մասին տվյալները 2. - Որակի ձեռնարկը, - լաբորատորիայի տեխնիկական անձնագիրը, - անձնակազմի յուրաքանչյուր անդամի կրթության փաստաթղթի պատճեն 3. - Որակի ձեռնարկը, - հայտատուի կանոնադրության (եթե նա իրավաբանական անձ է) պատճեն, - հավատարմագրման ծախսերի վճարման անդորրագիրը
23	Որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրվելու նպատակով հայտին կից ներկայացվող փաստաթղթերից են՝	<ol style="list-style-type: none"> 1. - Լաբորատորիայի տեխնիկական անձնագիրը, - հավատարմագրման ոլորտի նախագիծը, - դիմում՝ ուղղված հավատարմագրման գործակալության պետին 2. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - հարցաթերթը, - հավատարմագրման ծախսերի վճարման անդորրագիրը 3. - Իրավաբանական անձ հայտատուի կանոնադրության պատճեն, - հայտատուի պետական գրանցման վկայականի պատճեն, - հարցաթերթը
24	Հավատարմագրման նպատակով ո՞ր փաստաթղթերն են ներկայացվում ազգային մարմնի սահմանված ձևերին համապատասխան	<ol style="list-style-type: none"> 1. - Իր գործունեության մասին տվյալներ, - հարցաթերթը, - լաբորատորիայի տեխնիկական անձնագիրը 2. - Հավատարմագրման ոլորտի նախագիծը, - հարցաթերթը, - որակի ձեռնարկը 3. - Իր գործունեության մասին տվյալներ, - հարցաթերթը, - որակի ձեռնարկը
25	Ազգային մարմինը հայտն ընդունելուց հետո հավատարմագրման հայտին կից փաստաթղթերի լրակազմի ստուգումն իրականացնում է	<ol style="list-style-type: none"> 1. Սահմանափակում չկա 2. Յոթ աշխատանքային օրվա ընթացքում 3. Երեք աշխատանքային օրվա ընթացքում
26	Ընդունված և գրանցված հավատարմագրման հայտին կից փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝	<ol style="list-style-type: none"> 1. 30 աշխատանքային օրվա ընթացքում 2. 30 օրվա ընթացքում 3. Երկշաբաթյա ժամկետում

27	Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հավատարմագրման չափանիշներին, ապա	<ol style="list-style-type: none"> 1. Ազգային մարմինն այդ մասին եզրակացություն է ներկայացնում հավատարմագրման խորհուրդ 2. Ազգային մարմինը կայացնում է մերժման մասին որոշում և այդ մասին հայտնում հայտատուին 3. Ազգային մարմինը ժամկետ է տալիս նկատված թերությունները վերացնելու համար
28	Հավատարմագրման գործընթացը շարունակելու նպատակով՝ փորձագետներից և մասնագետներից կազմված գնահատման հանձնաժողով ստեղծում է	<ol style="list-style-type: none"> 1. Հավատարմագրման խորհուրդը 2. Ստանդարտների ազգային ինստիտուտը 3. Ազգային մարմինը
29	Հավատարմագրման գործընթացը շարունակելու նպատակով՝ գնահատման հանձնաժողովը գնահատման հաշվետվությունը ներկայացնում է	<ol style="list-style-type: none"> 1. Ազգային մարմին 2. Հավատարմագրման խորհուրդ 3. Ոչ մի տեղ չի ներկայացնում: Համապատասխան մարմին է ներկայացնում միայն եզրակացությունը
30	Հավատարմագրման գործընթացը շարունակելու նպատակով գնահատման հաշվետվությունը ստանալուց հետո ազգային մարմինը	<ol style="list-style-type: none"> 1. Առաջարկություն է ներկայացնում հավատարմագրման խորհուրդ՝ կցելով գնահատման հաշվետվությունը, հայտատուի ներկայացրած փաստաթղթերը և դրանց փորձաքննության եզրակացությունը 2. Հավատարմագրում է կամ մերժում է 3. Միայն առաջարկություն է ներկայացնում հավատարմագրման խորհուրդ
31	Հավատարմագրման խորհրդի՝ հայտատուին հավատարմագրելու մասին որոշումն ընդունելուց հետո հավատարմագրման վկայագիրը գրանցում և հանձնում է	<ol style="list-style-type: none"> 1. Հավատարմագրման խորհուրդը 2. Ազգային մարմինը 3. Ազգային մարմինը գրանցում է գրանցամատյանում, սակայն հանձնում է հավատարմագրման խորհրդի նախագահը
32	Որքա՞ն է հավատարմագրման ժամկետը	<ol style="list-style-type: none"> 1. Հինգ տարուց ոչ ավելի, սահմանում է հավատարմագրման խորհուրդը 2. Երեք տարի 3. Կախված է հայտատուի կողմից նուծված գումարից
33	Հավատարմագրված անձի պարբերական գնահատումն իրականացնում է	<ol style="list-style-type: none"> 1. Հավատարմագրման խորհրդի ստեղծած հանձնաժողովը 2. Հավատարմագրման գործակալությունը 3. Ազգային մարմնի կողմից ստեղծված գնահատման հանձնաժողովը
34	Հավատարմագրված անձի պարբերական գնահատման հանձնաժողովը պարբերական գնահատման հաշվետվությունը ներկայացնում է	<ol style="list-style-type: none"> 1. Հավատարմագրման խորհուրդ 2. Ազգային մարմին 3. Հաշվետվությունը պահում են հանձնաժողովում: Ազգային մարմին են ներկայացնում եզրակացություն-առաջարկություն
35	Հավատարմագրման խորհուրդը հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնում է	<ol style="list-style-type: none"> 1. Մինչև կասեցման հիմքերի վերացումը, բայց երկու ամսից ոչ ավելի ժամկետով 2. Մինչև կասեցման հիմքերի վերացումը 3. Մինչև կասեցման հիմքերի վերացումը, բայց մեկ ամսից ոչ ավելի ժամկետով
36	Հավատարմագրման վկայագրի գործողությունը վերականգնելու համար անհրաժեշտ է	<ol style="list-style-type: none"> 1. Դիմումը պարտադիր չէ: Վերականգնվում է համապատասխան գնահատման արդյունքում 2. Դիմում ներկայացնել հավատարմագրման խորհուրդ 3. Դիմում ներկայացնել ազգային մարմին

37	Ներկայացված պատասխաններից ո՞ր զույգն է հանդիսանում հավատարմագրման վկայագրի դադարեցման հիմք	<ol style="list-style-type: none"> 1. - Հավատարմագրված անձը նախատեսված ժամկետում չի վերացրել կասեցման հիմքերը - Անձնակազմի 50 % -ը ազատվել է աշխատանքից 2. - Հավատարմագրված անձը նախատեսված ժամկետում չի վերացրել կասեցման հիմքերը - Հավատարմագրված անձը հրաժարվել է պարբերական գնահատման գործընթաց իրականացնելուց 3. - Դիմել է իր հավատարմագրման վկայագրի գործողությունը դադարեցնելու խնդրանքով - Հավատարմագրման ոլորտից դուրս իրականացրել է այլ ծառայություններ
38	Հավատարմագրման ոլորտը կարող է ընդլայնվել	<ol style="list-style-type: none"> 1. Հավատարմագրված անձի դիմումի հիման վրա 2. Պարբերական գնահատման արդյունքում 3. Ազգային մարմնի առաջարկությամբ
39	Ներկայացված պատասխաններից ո՞ր զույգն է հանդիսանում հավատարմագրման ոլորտի կրճատման հիմք	<ol style="list-style-type: none"> 1. - Հավատարմագրված անձի դիմումի հիման վրա - Եթե հավատարմագրման գործակալությունը ցանկանում է կրճատել 2. - Հավատարմագրված անձի դիմումի հիման վրա - Ազգային մարմնի առաջարկությամբ 3. - Հավատարմագրված անձի դիմումի հիման վրա - Հավատարմագրված անձի պարբերական գնահատման արդյունքում, եթե հավատարմագրված անձը չի համապատասխանում հավատարմագրման չափանիշներին